ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը	Սամվել Հարությունյան
Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ
Գործուղման վայրը և ժամկետները	ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2017թ. սեպտեմբերի 14-ից 16-ը
Հրավիրող կողմը	Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմ
Գործուղման նպատակը	Մասնակցություն Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի հայագիտական կենտրոնի կողմից կազմակերպված «Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի 300-ամյակը. պատմություն և արդիականություն» խորագրով միջազգային գիտաժողովին, որի համակազմակերպիչն էր ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն
Քննարկված թեմաները	Միջազգային գիտաժողովը նվիրված էր մի շարք հիմնախնդիրների քննարկմանը, ինչպես օրինակ՝ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի պատմական ուղին, կայացման փուլերը, Թեմի կողմից իրականացված կրթական, մշակութային և լուսավորչական գործունեությունը և նրա դերը Ռուսաստանի հայ համայնքի ազգային ինքնության և մշակութային ժառանգության պահպանման գործում, ինչպես նաև Ռուսաստանում հայկական սփյուռքի ձևավորման պատմությունը, համայնքի կրթական, լուսավորչական և մշակութային գործունեությունը և Ռուսաստանի հասարակական կյանքում ունեցած ներդրումը:
Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ	Միջոցառման ընթացքում տեղի ունեցան Ռուսաստանում Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը, հայ համայնքի ձևավորմանն ու Ռուսաստանի

քննարկված հարցերը	կրթամշակութային կյանքում նրա դերին նվիրված մի շարք պլենար նիստեր և քննարկումներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Մոսկովյան պատրիարքության ներկայացուցիչների և այլ բարձրաստիճան հյուրերի մասնակցությամբ: Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը՝ որպես գիտաժողովի կազմկոմիտեի անդամ և համակազմակերպիչ: Բացի գիտաժողովի շրջանակներում տեղի ունեցած նիստերից և քննարկումներից, Ս. Հարությունյանն առանձնազրույց է ունեցել մի շարք բարձրաստիճան հյուրերի հետ՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի միջև 2016թ. հունվարի 19-ին ք. Մոսկվայում կնքված «Հայագիտական հետազոտությունների ոլորտում համագործակցության մասին» մտադրությունների հուշագրի դրույթների շրջանակներում իրականացվող համագործակցության ընթացիկ ձեռքբերումները քննարկելու, ինչպես նաև համագործակցության նոր եզրեր գտնելու նպատակով:
Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորված ությունները, ստորագրված փաստաթղթերը:	Ս. Հարությունյանի հետ զրույցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը գոհունակություն է հայտնել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի կողմից հայտարարված հայագիտական հետազոտությունների նախագծերի աջակցության միջազգային մրցույթի անցկացման ընթացքի և արդյունքների կապակցությամբ: Վեհափառը կարևորել է այս նախաձեռնության շարունակականության ապահովումը և նշել է, որ մրցույթի արդյունքում 2017թ. հունվարից ֆինանսավորման երաշխավորված 6 համատեղ գիտական ծրագրերից յուրաքանչյուրը լուրջ արժեք ունի հայ-ռուսական կապերի խորացման և ամրապնդման գործում: Ս. Հարությունյանը հանդիպել է նաև Մոսկվայի պետական համալսարանի տեխնոպարկի գլխավոր տնօրեն Օլեգ Մովսեսյանի հետ՝ գիտական արդյունքի առևտրայնացման և գիտություն-տնտեսություն կապի ամրապնդմանն առնչվող հարցերը քննարկելու նպատակով: Զրույցի

	ընթացքում Օ. Մովսեսյանը ներկայացրել է գիտական հետազոտությունների առևտրայնացման և նորաստեղծ գիտատեխնիկական ձեռնարկությունների աջակցության ուղղությամբ իրենց կատարած աշխատանքները, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ Մոսկվայի պետական համալսարանի տեխնոպարկը կաջակցի Բորտնիկի հիմնադրամի հետ համատեղ իրականացվող կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ–ՌԴ ԻԱՀ–2017» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի գիտական արդյունքի առևտրայնացմանը:
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Ս. Հարությունյանն առանձնազրույց է ունեցել նաև Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ: Զրույցի ընթացքում Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը ներկայացրել է Մոսկվայում Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի հովանու ներքո հայկական գիմնազիայի հիմնադրման գործընթացի մանրամասները: ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն հաստատել է իր պատրաստակամությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ միասին օժանդակելու գիմնազիայի հիմնադրման և կայացման գործընթացին՝ ուսումնական ծրագրերը կազմելու, համապատասխան մասնագետներ գործուղելու, գրքերի հրատարակման, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրականացման հարցերում:
Գործուղվող	Սամվել Հարությունյան
Ստորագրություն, ամսաթիվ	20.09.2017թ.